Le Premier ministre arménien est persuadé que ce dernier va l'aider dans ses problèmes avec l'Azerbaïdjan et plus particulièrement pour les habitants du Haut-Karabagh. Ce qui explique qu'il lui téléphone toutes les semaines, quand il ne se déplace lui-même à Moscou ou à Sotchi. L'ennui, c'est que le camarade Poutine a fait sa B.A. en novembre 2020, en mettant en place 2.000 soldats de la paix au Haut-Karabagh. Lesquels casques bleus commencent de plus en plus, à assurer un service minimum, voire une neutralité plus que bienveillante envers la soldatesque azerbaïdjanaise.

Ne voyant rien arriver de concret du côté Moscou, Pachinian tente désespérément de se raccrocher à l'UE et aux États-Unis, lesquels n'en ont rien à faire de l'Arménie et encore moins du Haut-Karabagh. Un Artsakh, que le très érudit haut fonctionnaire chargé de la politique étrangère et de sécurité commune de l'UE Josep Borrell, a traité d'un revers de main d'Oblast postsoviétique. Tout comme son homologue américain, il a conseillé au dirigeant arménien de reconnaître que le Haut-Karabagh faisait partie de l'Azerbaïdjan afin d'arriver au plus vite à un traité de paix. Chose que ce dernier s'est empressé de faire. Funeste décision.

Le potentat azéri a quasiment atteint ses objectifs, il ne reste plus qu'à verrouiller l'histoire de la liaison, routière et ferroviaire, avec le Nakhitchevan. Ce qui explique son satisfaction au sortir des rencontres multilatérales de ces derniers mois. Conséquence directe, il a remplacé le barrage des soi-disant écolos, par un poste frontière à l'entrée du couloir de Latchine, ce qui a entraîné un blocus total des 120.000 habitants du Haut-Karabagh, couloir compris. S'il arrive à tenir tête à la Cour internationale de Justice, alors l'Arménie à côté ne fait pas le poids.

Croire qu'Ilham Aliev a diminué la pression sur les arméniens, nationaux ou Karabaghis, c'est tout le contraire qui se passe. Plusieurs fois par semaine, des coups de feu, d'armes légères ou plus lourdes, sont tirés du territoire azerbaïdjanais au motif que les arméniens ont commencé les premiers. C'est tellement simple de faire avaler ça aux occidentaux. Quant aux observateurs de l'UE, ils observent et prennent des notes. D'autant qu'ils préviennent du circuit qu'ils vont emprunter.

Nigol Pachinian fait tout son possible pour plaire à ses deux voisins, jusqu'à regretter que certains persistent à commémorer le 108^e anniversaire du Génocide des arméniens et surtout en demandant la reconnaissance aux descendants des auteurs. Il espère qu'en faisant profil bas, qu'en laissant saccager le patrimoine arménien, les turco-azerbaïdjanaïses vont laisser l'Arménie poursuivre son développement.

C'est dommage qu'il n'écoute pas à fond les propos de ces deux voisins.

Les forces armées azéri seraient dans un état déplorable

LE WEB— Selon le site Avia-pro, la situation dans l'armée azerbaïdjanaise s'aggrave, comme le confirment un certain nombre d'incidents récents qui suscitent l'inquiétude. Selon des sources, des suicides fréquents, des bizutages entre militaires et officiers, ainsi que d'autres événements similaires qui se produisent depuis longtemps, indiquent des problèmes dans le système de commandement et de contrôle des forces armées.

Il existe un profond mécontentement au sein de la structure des forces armées azerbaïdjanaïses, et la responsabilité en incombe en grande partie au ministre de la Défense, Zakir Hasanov. Des sources disent que



Zakir Hasanov

Hasanov n'en fait pas assez pour résoudre les problèmes et que la situation dans l'armée devient de plus en plus désordonnée.

Malgré les déclarations de Hasanov sur sa volonté de développer les forces armées et de mettre en œuvre ces plans, la situation réelle dans ce corps, selon des sources, ne correspond pas à ses promesses. Au

lieu de régler les problèmes et d'assurer le fonctionnement efficace des forces armées, Hasanov serait en train de négocier activement dans les coulisses avec les autorités turques.

De plus, le ministre de la Défense semble bénéficier du soutien et du parrainage turcs dans ses actions, ce qui soulève des questions sur son engagement envers les intérêts de son État. À la lumière de ces circonstances, les actions de Hasanov peuvent être interprétées comme une tentative de poursuivre ses propres desseins politiques.

Cet ensemble de faits ouvre le tableau d'une crise profonde dans les forces armées azerbaïdjanaïses.

(Armenews)

MARCHE...

suite de la page F1

to de filles exultant.

Les organisateurs ont rapporté une quarantaine d'interpellations dès le début des rassemblements mais ce nombre n'a pas été confirmé de source officielle.

L'an dernier plus de 200 personnes avaient été arrêtées.

Depuis un spectaculaire défilé qui avait réuni plus de 100.000 personnes à Istanbul en 2014, les autorités turques ont progressivement banni la Marche des Fiertés, avançant des raisons de sécurité.

L'homosexualité, dépénalisée en Turquie depuis le milieu du XIX^e siècle (1858), reste largement soumise à l'opprobre

sociale et en but à l'hostilité du parti islamo-conservateur au pouvoir, l'AKP.

Tout au long de la campagne qui a conduit à sa réélection, le 28 mai, le président Recep Tayyip Erdogan a stigmatisé les communautés LGBTQ+ qu'il a faites copieusement siffler jusqu'au soir de sa victoire, les accusant de vouloir détruire la famille traditionnelle.

Le chef de l'État n'a pratiquement pas tenu un seul meeting sans attaquer les communautés gay et trans: «Aucun LGBT ne peut être le produit de cette nation», a-t-il affirmé à plusieurs reprises taxant les personnes concernées de «per-

vers» et de déviants».

En septembre 2022, plus d'une centaine de groupes et d'associations conservateurs, pour la plupart proches du pouvoir, avaient convoqué une manifestations pour réclamer l'interdiction des groupes de défense des droits des homosexuels et des transgenres.

Plusieurs centaines de personnes avaient alors pu, sans entrave, se retrouver dans le quartier conservateur de Fatih, sur la rive européenne, sous des bannières proclamant: «Protégez votre famille et votre génération», «Nous n'allons pas laisser faire ceux qui font la guerre à la famille», «Dis Non au projet de société sans genre», ou encore «Papa + maman + bébé = famille».

(AFP)

Ascenseur  Elevator
Services Inc.

PO Box 30, St-Laurent, Qc. H4L 4V4

RBQ# 1812-6474-22

www.adamselevator.ca

TEL: 514-745-4455 - FAX: 514-745-6613

**RENOVATION, REPAIRS, MAINTENANCE,
INSTALLATION OF ELEVATORS.**

Eddie, Pedro, Joyce Oughourlian

ՏԵՍԱԴԱՁՏ

Լաւագոյն բարեցիշը

Յունիսի 17-18 շաբաթավերջին տեղի ունեցան Սուրբ Յակոբ ազգային վարժարանի նախ Բաստրմածեան երկրորդականի ապա Վարդէս եւ Աստղիկ Սարաֆեան նախակրթարանի ամսական շաբաթական հանդէսները: Վստահ եմ այդ մասին թղթակցութիւններ լոյս կը տեսնեն, սակայն կարելի չէ անտարբեր մնալ ի տես կարգ մը երեւոյթներու, — յատկապէս մէկ կարեւոր երեւոյթի, — որոնց կ'ուզեմ անդրադառնալ այս սիւնակին մէջ:

Երկրորդականի այս տարուան հունձքը՝ 54 աշակերտ-աշակերտուհի, մկրտուեցան Սոսէ Մայրիկի անունով: Այս կը հանդիսանայ շարունակութիւնը աւանդութեան մը, ըստ որուն շրջանաւարտներու իւրաքանչիւր խումբի կը շնորհուի ոչ միայն անուն մը, այլ նաեւ այդ անունն առնչուած նպատակ մը, առաքելութիւն մը: Հերոս հայ կնոջ անունը ոչ միայն յանդգնութեան, քաջութեան, այլեւ մինչեւ վերջին շունչ ազգին պաշտպանութեան, ազգին ծառայութեան նուիրուելու յանձնառութեան խորհրդանիշ մըն է, որ ահա աւանդ կը տրուի մեր նոր սերունդին: Ան նաեւ վկայութիւնն է այն ոգիին, որ կը տիրէ կրթական այս հաստատութեան ներս, եւ ոչ միայն հաստատութեան, այլեւ անոր զօրավիգ կանգնած համայնքին:

Այդ ոգիով էր, որ 67 տարի առաջ (1956), գնդամուղի սեղանի մը շուրջ, տասնեակ մը աշակերտներով ստեղծուեց էր միօրեայ վարժարան մը, 1959-ին դառնալով Սուրբ Յակոբի (ներկայիս «Դրօ եւ Աննա Փիլիկեան») շաբաթօրեայ վարժարանը, 52 տարի առաջ (1971)՝ Արարատ ամառնային ճամբարը, 50 տարի առաջ (1973)՝ ՀՕՄ-ի (CPE St-Jacques) ծաղկոցը, 49 տարի առաջ (1974)՝ ամենօրեայ վարժարանը եւ վերջապէս 2007-ին «Արամ եւ Պերճուհի Մարգարեան» անունով կնքուած մանկամտուրը:

Կը տեղեկանանք, որ «Սոսէ Մայրիկ» հունձքի 54 աշակերտ-աշակերտուհիներէն 51-ը իրենց ուսումը կը

շարունակեն իրենց ընտրած նախահամալսարանական բարձրագոյն կրթարաններուն (գոյեծներուն) մէջ: Ասիկա վարժարանին համար պատուաբեր յաջողութիւն է: Որեւէ կրթական հաստատութիւն նման արդիւնքով հպարտ պիտի զգար մեծապէս, մինչ Սուրբ Յակոբի համար բնական երեւոյթ կը նկատուի այդ: Աւելցնեմ, որ այդ աշակերտներէն 20-ը ձեռք ձգած են 85% կամ աւելի բարձր ընդհանուր միջին, ինչ որ նոյնպէս շատ քաջալերական երեւոյթ մըն է:

Այս դրական արդիւնքներուն համար շնորհաւորելի են առաջին հերթին իրե՛նք՝ աշակերտները, իրենց ունեցած կարողութիւններուն ու տարած աշխատանքին համար, տնօրէնութիւնն ու ուսուցչական կազմը՝ իրենց սպառած շունչին ու թափած քրտինքին համար, եւ ի հարկէ ծնողները՝ իրենց յանձն առած գոհողութիւններուն ու գաւազներուն հանդէպ ցուցաբերած անսակարկ հոգատարութեան ու քաջալերանքին համար:

Բայց կայ աւելին. 54-էն 29-ն Սուրբ Յակոբի կրթարաններու աշակերտ են հանդիսացած մանկամտուրէն մինչեւ երկրորդականի աւարտը: Սա ինքնին խօսուելի վկայութիւնն է այն վստահութեան, որ ծնողները տածած են ու կը տածեն այս հաստատութիւններուն նկատմամբ (մինչ ուրիշներ հասկնալի, բայց յաճախ ալ անհասկնալի պատճառներով իրենց գաւազները երբեք Սուրբ Յակոբի կամ գաղութի այլ հայկական վարժարանները չեն ուղարկեր կամ մասնակի կ'ուղարկեն, հուսկ կը յանձնեն օտար վարժարան): Անշուշտ այդ 29-էն գատ միւս աշակերտները աւելի մեծ տարիքի գաղթած են Մոնթրէլ ու յաջողած միանալ իրենց տարիքի կարգերուն, նոյնիսկ յատուկ ճիգ թափելով, որպէսզի տիրապետեն վարժարանի ուսման գլխաւոր լեզուին՝ ֆրանսերէնին: Նշենք նաեւ, որ այս վերջիններուն մէջ կային ոմանք, որոնք այդպէս օտար վարժարան զրկուելէ ետք, մերժած են հոն շարունակել իրենց

ուսումը ու պնդած են զայ կամ վերադառնալ Սուրբ Յակոբ՝ նոյնպէս յատուկ ճիգերով ամրապնդելով իրենց պակասող հայերէնի հմտութիւնը: Այս ալ յիշատակման արժանի այլ երեւոյթ է:

Ընդգծելի է սակայն մէկ ուրիշ երեւոյթ, որուն կ'ուզեմ անպայման անդրադառնալ:

Մեր այդ 54 շրջանաւարտներուն կէսը գաւազներն են Սուրբ Յակոբի նախկին շրջանաւարտներու կամ թերաւարտներու: Այս վերջիններէն մէկ քանիին ալ արդէն թոռնիկները կը բախեն մանկամտուրի կամ ծաղկոցի դռները: Այդ ծնողները, որոնք օրին տիրանալով իրենց պատշաճ նախակրթութեան, յաջողութեամբ շարունակած են իրենց ուսումը, ձեռք ձգած բարձրագոյն վկայականներ ու հմտութիւններ, մտած կեանքի ասպարէզ ու դարձած յաջողակ քաղաքացիներ, այլեւ իրենց մասնագիտութեան մէջ ականաւոր դէմքեր, ամենայն վստահութեամբ ահա իրենց գաւազներն ալ յանձնած են իրենց մայր կրթարանին (alma mater) եւ այսօր անոնց յաջող շրջանաւարտութեամբ կը ստանան իրենց գոհունակութիւնը: Աւելցնենք, որ այդ ծնողներէն ալ շատեր ներկայիս արդէն իրե՛նք ստանձնած են համայնքի ղեկավարութիւնը՝ տարբեր կազմակերպութիւններու ճամբով, նոյնիսկ գաղութէն ալ անդին՝ շրջանային թէ՛ համահայկական առումով:

Այս է գլխաւոր բարենիշը, որուն կ'արժանանան վարժարանը ինքը եւ այդ վարժարանը ոտքի պահող համայնքը:

Մեր ակնկալութիւնն ու յոյսն է, որ այդ բարենիշը կարելի ըլլայ պահել «Սոսէ Մայրիկ» հունձքին ալ գալիք ներդրումներով: Եւ յաջորդ հունձքերուն...

ՎԻԷԺ-ԱՐՄԷՆ

Փաշիգեան... Սկիզբը էջ 8

Հայաստանի պետական գիտնաշանին եւ օրհներգին մասին, որոնք երկուքն ալ ամրագրուած են Հայաստանի Սահմանադրութեամբ: Այլ կերպ ըսած, Փաշիգեանի քննադատութիւնները հակասահմանադրական էին:

Ահա, թէ ինչպէս Փաշիգեան նկարագրած է Հայաստանի գիտնաշանը. «Ի՞նչ է պատկերուած հոն. Նոյեան տապանը Արարատ սարի վրայ, Հայաստանի չորս գահակալութիւններու, կայսրութիւններու, չորս հարստութիւններու գիտնաշանները: Այդ գիտնաշանը 1991ին հիմնադրուած պետութեան հետ ի՞նչ կապ ունի: Նայելով (գիտնաշանի) կեդրոնին, Արարատ սարի վրայ Նոյեան տապանն է, Հայաստանի Հանրապետութեան այսօրուան տարածքը ջրհեղեղի տակ է, առիւծ, որ արդէն Հայաստանի բնական պայմաններու բերուածով շատոնց ի վեր հոս չ'ապրիր»:

Ասիկա «մեզմէ իւրաքանչիւրին մէջ գոյութիւն ունեցող այդ երկուութեան մասին է, պատմական Հայաստանի եւ իրական Հայաստանի...: Իրական Հայաստանը պէ՞տք է ծառայէ պատմական Հայաստանին, թէ՞ պատմական Հայաստանը պէտք է ծառայէ իրական Հայաստանին...: Ի վերջոյ, պատմական Հայաստանի 12 մայրաքաղաքներէն 6 հատը կը գտնուին Հայաստանի Հանրապետութեան տարածքին մէջ: Իսկ այդ մայրաքաղաքներուն մէջ վերջին անգամ ե՞րբ եղած էք, տեսա՞՞ծ էք անոնց վիճակը, գնահատա՞՞ծ էք թէ ի՞նչ վիճակի մէջ են: Այդքան աւանդոյթներէ կը խօսինք,

արժէքներէ կը խօսինք, մեր մայրաքաղաքները, մեր պատմական խորհրդանիշները այսօր աւերակներու տակ են, կը ներէք այս ալ ըսելու բան չէ, բայց կրնայ պարզուել, որ Հայաստանէն դուրս գտնուող որոշ (պատմական) մայրաքաղաքներ աւելի լաւ վիճակի մէջ են, քան Հայաստանի Հանրապետութեան տարածքէն ներս գտնուողները»:

Եզրափակելով խօսքը՝ Փաշիգեան առիթը յարմար գտաւ բողոքելու նաեւ Հայաստանի պետական խորհրդանիշներէն մէկուն՝ պետական օրհներգին դէմ, նոյն այն օրը, երբ Հայաստան կը նշէր Պետական խորհրդանիշներու օրը: Ան ըսաւ. «Այսօր մեր հիմնի պաշտօնական բառերը կ'աւարտին հետեւեալ կերպ՝ գոհուելով կ'աւարտի: Ինքը՝ գաղափարախօսութիւնը ճիշդ է, այսինքն՝ գրութեան հետ ես որեւէ խնդիր չունիմ, բայց կ'աւարտի գոհուելու տողով եւ գոհուելու տեսարանով: Ես վերջերս շատ կը մտածեմ, ի հարկէ զուտ էսթետիքական, բանաստեղծական առումով դիւրին չէ իրականացնելը, բայց կը կարծեմ՝ քաղաքական առումով շատ ճիշդ կ'ըլլայ, որ Հայաստանի Հանրապետութեան հիմնը աւարտի հետեւեալ տողերով.

Նայիր նրան՝ երեք գոյնով
Նուիրական մէկ նշան,
Թող փողփողի թշնամու դէմ,
Թող միշտ պանծայ Հայաստան»:
Փաշիգեան կ'առաջարկէր օրհներգը կրճատել՝ ջնջելով վերջին չորս տողերը.
«Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ մեռնի,

Բայց երանի, որ իւր ազգի Ազատութեան կը գոհուի»:

Ասիկա Փաշիգեանի կողմէ փորձ մը եւս է՝ տկարացնելու համար հայերուն ազգայնական զգացումները՝ հանդարտեցնելու համար Հայաստանի թշնամիները: Օրհներգի խօսքերը դրած է յայտնի բանաստեղծ Միքայէլ Նայբանդեան, 1861-ին: Օրհներգը ընդունուած է Հայաստանի Ա. Հանրապետութեան կողմէ, 1918-ին: Վերընդունուած է ներկայ Հայաստանի Հանրապետութեան կողմէ՝ ձեւակերպումներու փոքր փոփոխութեամբ:

Ի՞նչ պիտի առաջարկէ Փաշիգեան յաջորդիւ՝ փոխել Հայաստանի դրօշը ու երկրի անո՞ւնը: Այսուամենայնիւ, այս այն մարդն է, որ ինքնահաւանորէն յայտարարած է. «Ես չեմ կրնար պատկերացնել մարդ մը, որ կրնայ հայրենիքս ինձմէ շատ սիրել: Ձի կրնար այդպիսի բան ըլլալ, անկարելի է»:
Նոյնիսկ խորհրդային ժամանակաշրջանին Արարատ լեռը պահած են խորհրդային Հայաստանի գիտնաշանի վրայ: Ինչպէ՞ս կրնայ անկախ Հայաստանի Հանրապետութեան վարչապետը նուազ ազգայնական ըլլալ, քան խորհրդային Հայաստանի ղեկավարները:

Արեւելահայերէնի թարգմանեց՝ Ռուզաննա Աւագեան

Արեւմտահայերէնի վերածեց՝ Սեդա Գրիգորեան

Թորոնթոյի «ՆՈՐ ՀԱՅ ՀՈՐԻԶՈՆ» յատագիրը կարելի է դիտել -
Շաբաթ առաւօտեան ժամը 9:00-10:00
Կիրակի առաւօտեան ժամը 6:00-7:00
Երեքշաբթի կեսօրոյ ժամը 12:00-1:00
Հինգշաբթի երեկոյեան ժամը 10:00-11:00
OMNI 1 կայանէն:

Voyages HAIG Travel
Ձեր բոլոր ճամբորդական Կարիքներուն համար հեռաձայնել՝ (514) 284-7676
ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ...
ԼԱՒԱԳՈՅՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻԻՆ ԵՒ ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԳԻՆԵՐ
*Նոր Հասցէ՝
Voyages Haig Travel
4150 Rue Sherbrooke Ouest suite 404A, Westmount, QC H3Z 1C2
PERMIS DE QUÉBEC
Tel: + 1 514-284-7676
Email info@haigtravel.ca

Յեղասպանության պատճառով որբացած հայորդիներու հանդէպ Գանատայի մարդասիրական արարքի 100-ամեակը նշուեցաւ Ճորճթաունի մէջ

100 տարի առաջ, Գանատայի պետութիւնը որոշում կը կայացնէր ստանձնելու հոգատարութիւնը Հայոց Յեղասպանութեան հոգ որբացած հայ մանուկներու, որոնց առաջին խումբը Օնթարիոյի Ճորճթաուն քաղաքի Միտրոպոլիտի ազարակ հասաւ 1923 թուականի Յուլիս 1-ին: Նոյն վայրին մէջ, 100 տարի ետք, Յունիս 24-ին, հանդիսաւոր արարողութեամբ նշուեցաւ Ճորճթաունի հայ որբերու Գանատա ժամանման 100-ամեայ յորեկանը, որուն ներկայ գտնուեցան Գանատայի խորհրդարանի եւ Օնթարիոյի խորհրդարանի անդամներ, քաղաքական գեղեցիկ, հոգեւորականներ եւ Օնթարիոյի հայ համայնքի ներկայացուցիչներ: Միջոցառումը կազմակերպուած էր «Հայոց Յեղասպանութեան Ուսուցման Սառա Գորնիլկ Կեդրոն»ին կողմէ: ՀՄԼՄ Թորոնթոյի փողերախումբի հնչեցուցած Գանատայի եւ Հայաստանի պետական օրհներգներէն ետք օրուան հանդիսավար Կապրիելյա Բադիկեան բացումը կատարեց հանդիսութեան, իր խօսքին մէջ նշելով, որ Ճորճթաունի տղոց ցեղասպանութեան ողբակցանքն հարիւրամեակ մը ետք, Թուրքիա եւ Ատրպէյճան նոյն ցեղասպանական վարքագիծը որդեգրած են Արցախի հայ բնակչութեան հանդէպ:

Յաջորդաբար խօսք առին եւ պատգամներ փոխանցեցին Գանատայի Հայ Դատի յանձնախումբի ատենապետ Շահէն Միրաքեան, Գանատայի մօտ Հայաստանի Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան Տիկ Անահիտ Յարութիւնեան, Գանատա-Հայաստան խորհրդարանական բարեկամութեան խմբակցութեան նախագահ Պարլըն Մէյ, Գանատայի խորհրդարանի անդամ Մայքըլ Չոնկ, Օնթարիոյի խորհրդարանի անդամ Արիս Պապիկեան, Հալթըն Հիլզի փոխ քաղաքապետ Պոպ Ինկիլիս եւ Գանատայի Հայոց Թեմի բարեջան առաջնորդ Բաբգէն Արք. Չարեան, որոնք դուրստեցին Գանատայի պետութեան մարդասիրական արարքը:

Ճորճթաունի հայ որբերու յորեկանին առիթով, Գանատայի վարչապետ Ճորճթաունի Թրոնտոյի ուղերձը ընթերցեց Պարլըն Մէյը: Ուղերձին մէջ Գանատայի վարչապետը կը հաստատէ, թէ Հայոց ցեղասպանութիւնը մարդկութեան պատմութեան ամենամութ էջերէն մէկն էր եւ յորեկանի ողբակցումը կարեւոր առիթ է յարգելու համար յիշատակը Ճորճթաունի տղոց եւ աղջիկներուն եւ նշելու անոնց վերապրելու պատմութիւնը: Ճորճթաունի որբերու յորեկանականին առիթով Օնթարիոյի վարչապետ Տակ Ֆորտի ուղերձը փոխանցեց Արիս Պապիկեան, իսկ Գանատայի խորհրդարանի ընդգրկմադիր կուսակցութեան ղեկավար Փիեռ Փոլիէլիի հրապարակած ուղերձը՝ Մայքըլ Չոնկ:

Յատուկ վկայութիւններով ելոյթ ունեցան Ճորճթաունի որբերու գաւակները, Միսաք Թումաճեանի գաւակը՝ Թոմ Թորոս ձէքսըն, Փոլ Ատուրեանի գաւակը՝ Պոպ Ատուրեան եւ Մամբրէ Շիրինեանի եւ Մարիամ Մազմանեան-Շիրինեանի գաւակը՝ Լոռն Շիրինեան, որոնք իրենց երախտագիտութիւնը յայտնեցին Գանատայի պետութեան:

Առաջնորդ Բաբգէն Արք. Չարեան եզրափակիչ իր պատգամով շնորհակցեց, որ Ճորճթաունի հայ որբերու դարձան Հայոց Յեղասպանութեան պատմութեան վկայներ Գանատայի մէջ:

*
Ճորճթաունի հայ որբերու Պատմական ակնարկ
Մերձաւոր Արեւելքի հազարաւոր

կարիքաւորներու օգնելու նպատակով 1917 թուականին Թորոնթոյի մէջ հաստատուած Հայ գորգավաճառ Լեւոն Պապայեանի նախաձեռնութեամբ ստեղծուած է Հայկական Նպաստամատոյց Հիմնադրամը (Armenian Relief Fund), որուն գործունէութեան մեծապէս աջակցած են եկեղեցական առաջնորդներ, կրօնական խումբեր, նշանաւոր հասարակական գործիչներ եւ ազգեցիկ գէմքեր, ինչպիսիք էին Օնթարիոյի վարչապետ Ուիլիամ Հերսթը, Գանատական Առեւտրային Դրամատան նախագահ Ուիլիամ Միլոքը, Թորոնթոյի մէջ բնակող մեծահարուստներ, որոնք դարձան հիմնադրամին նուիրատուները: 1921 թուականին Հայկական Նպաստամատոյց Հիմնադրամը վերանուանուեցաւ Գանատայի Հայկական Նպաստամատոյց Ընկերակցութիւն, եւ գլխաւոր քարտուղար նշանակուեցաւ դոկտոր Ա. Ճ. Ուիլիսիլը: Նպաստամատոյց Ընկերակցութեան գլխաւոր գրասենեակը կը գտնուէր Թորոնթոյի մէջ, բայց մասնաճիւղեր ունէր Քինկսթընի, Վիքթորիայի եւ Բրիտանական Գոլուեմպոյի մէջ:

Գանատայի Հայկական Նպաստամատոյց Ընկերակցութիւնը մարդասիրական օգնութեան հարցով գանատացիներու մասնակցութիւնը կազմակերպելու նպատակով, քարոզական լայն գործունէութիւն ծաւակեց: Այն իրագործուեցաւ հիմնականօրէն գանատական մամուլի, հանրութեան ուղղուած առանձին անհատներու եւ Օսմանեան կայսրութեան վերադարձած միսիոնարներու ելոյթներու եւ կոչերու միջոցով: Բանախօսութիւններն ու զեկոյցները նպաստամատոյց Ընկերակցութեան քարոզարշաւին անբաժանելի մասն էին. շատ յաճախ տարածաշրջանէն վերադարձած միսիոնարները Գանատայի տարբեր քաղաքներու մէջ հանդիպումներ կը կազմակերպէին գանատացիներու հետ, որոնց ընթացքին կը ներկայացնէին Մերձաւոր Արեւելքի մէջ տիրող իրավիճակին եւ կոտորածներուն մասին մանրամասնութիւններ: The Globe թերթի 1920 Յունուար 17-ի թիւին մէջ յայտարարութիւն տեղադրուած էր «Հայաստանի աղէտը» խորագրով, որ կը հրակրէր ընթերցողները ներկայ գտնուելու Մերձաւոր Արեւելքէն վերադարձած միսիոնարուհի Իռա Փիրսի հետ հանդիպման:

1917-ին գանատական յայտնի The Globe եւ Winnipeg Free Press թերթերուն մէջ Գանատայի Հայկական Նպաստամատոյց Ընկերակցութիւնը տպագրեց «Սուրբ Ծնունդի գանատական մեծ տուփ՝ տառապեալ հայերուն» խորագրով պատաստներ, որոնց մէջ ներկայացուած էր ցեղասպանութեան վերապրած հայ որբուհի Շուշանի պատմութիւնն ու նկարը՝ «Դուք թոյլ չէք տար, որ ես սովամահ ըլլամ, այնպէս չէ՞» կարգախօսով: Հանգանակութիւններուն իրենց մասնակցութիւնը բերին նաեւ կիրակնօրեայ դպրոցները ողջ Գանատայի տարածքին: 1918-1920 թուականներուն կիրակնօրեայ դպրոցներուն մէջ երեք անգամ կազմակերպուած հանգանակութիւններուն ընթացքին հաւաքուած է աւելի քան 300000 տոլար:

1922 թուականին, երբ թրքական ազգայնական շարժումը մեծ թափ ստացած էր, լուրջ սպառնալիք ստեղծուած էր Հայ որբերու անվտանգութեան հարցով, The Globe թերթի տնօրէն Բ. ձեքրին եւ Գանատայի Հայկական Նպաստամատոյց Ընկերակցութեան գլխաւոր քարտուղար Ա. Ճ. Ուիլիսիլը Լոնտոնի քաղաքապետական հիմնադրամին եւ Մերձաւոր Արեւելքի Ամերիկեան Նպաստամատոյցի անունով 1922 Նոյեմբերին դիմեց Գանատայի վարչապետ Ուիլիամ Լիոն Մակքէնզի Բինկին եւ ներգաղթեալներու հարցերով նախարար Չարլզ Սթիւարթին՝ Հայ գաղթականներն ու որբերը Գանատա տեղափոխելու էին միայն կոտորածներէն վերապրած որբ երեխաներ: 1922 Նոյեմբերին ընկերակցութիւնը կառավարութեան ներկայացուցչու յարցով 5 տարիներուն ընթացքին շուրջ 2000 երեխայ Գանատա տեղափոխելու Գանատայի արեւելեան, կեդրոնական եւ արեւմտեան շրջաններուն մէջ, Գանատայի Հայկական Նպաստամատոյցի խնամքին ներքոյ, մինչեւ իրենց 18 տարեկան ըլլալը: Մինչեւ Գանատա հասնելը բժշկական քննութիւն անցնելը եւ 15 տարեկան երեխաներուն տառաճանաչ ըլլալը տեղափոխութեան պարտադիր պայմաններն էին: Ութն տասնեակու տարեկան Հայ որբերու 46 հոգիէ բաղկացած առաջին խումբը, Լոնտոնի քաղաքապետական հիմնադրամին հովանիին տակ գտնուող Քորֆուի որբանոցէն Քեպէզ ժամանեց 1923 Յունիս 29-ին, ուրիշ այ Յուլիս 1-ին՝ Ճորճթաուն: Յաջորդ վեց շաբթուան ընթացքին անոնց միացան եւս 4 տղաք: Յաջորդ խումբը (40 տղաներէ կազմուած) Քորֆուի որբանոցէն Ճորճթաուն եկաւ 1924-ին, իսկ 1926-ին՝ 8 երեխայ:



1924-ին Գանատայի Հայկական Նպաստամատոյց Ընկերակցութեան գլխաւոր քարտուղար Ա. Ճ. Ուիլիսիլին փոխարինեց Պատուելի Իռա Փիրսը, որ երկար տարիներ ապրելով եւ աշխատելով Օսմանեան կայսրութեան հայերու շրջանակներուն մէջ, դարձած էր ցեղասպանութեան ակնատես: Գանատա տեղափոխուած երեխաներէն 109 հոգիէ բաղկացած խումբ մը նպաստամատոյց Ընկերակցութիւնը տեղաւորեց Ճորճթաուն (Օնթարիո) գտնուող ազարակի մը մէջ, ուր գտնուէր կրթեցիլ եւ դաստիարակեցիլ որպէս Գանատայի լիբրալ քաղաքացիներ: Յետագային այդ երեխաները յայտնի դարձան Ճորճթաունի տղաներ անուանումով: Կառավարութիւնը այդ տղաքը խնամելուն համար, նպաստամատոյց Ընկերակցութիւնը տրամադրեց 25000 տոլար: 1923-ին ազարակին ղեկավարութիւնը փորձ մը կատարեց անուանափոխելու տղաքը, պատճառաբանելով որ

տղաներէն ոմանց անունները դժուար կ'արտասանուէին: Նախաձեռնութիւնը մեծ դժգոհութիւն առաջացուց Հայ որբերուն շրջանակին մէջ եւ յետագայ ընթացք չստացաւ, իսկ խնդրին լուծում տալու համար տղաները համարակալեցին 1-109 թիւերով: Ազարակին մէջ, որպէս ուսուցչուհի աշխատանքի լծուած էր Ա. Լ. Ալեքսանեանը, որուն ջանքերով 1926 թուականին լոյս տեսաւ «Արարատ» ամսաթերթը: Այն 14 թերթէ բաղկացած ամսաթերթ էր, ուր կը տպագրուէին ազարակի տղոց յօդուածները եւ հայերէնէն անգլերէն թարգմանուած պատմութիւններ: Օրիորդ Ալեքսանեանի այդ նախաձեռնութիւնը մեծ նշանակութիւն ունեցաւ տղոց ինքնութեան եւ մայրենի լեզուին պահպանման հարցով, քանի որ ազարակին մէջ օգտագործուող լեզուն անգլերէնն էր: Ամսագրին տպագրութեան կ'աջակցէր Թորոնթոյի մէջ բնակող գորգավաճառ Լեւոն Պապայեան, որ հայերէն տառերով տպագրամբքնայ նուիրեց տղոց: «Արարատ» ունեցաւ ընդամենը 15 թիւ: 1927-ին Ա. Լ. Ալեքսանեան շարունակեց ամսագրին թողարկումը միայն հայերէն լեզուով: Առաջին տղաքը ազարակը լքեցին 1925 թուականին: Գանատայի կառավարութեան ներգաղթեալներու վարչութեան պահանջքով 1925 թուականի տղաքը, որոնք բաւական հասուն էին ինքնուրոյն կեանք սկսելու համար, Ճորճթաունէն ուղարկուեցան հարաւային Օնթարիոյի այլ ազարակներ: Անոնց մէկ մասը տեղաւորեցին գանատական ընտանիքներու մէջ: 1927-ին ազարակին մէջ մնացեւ իր ընդամենը 20 տղայ: Ճորճթաունէն դուրս գալէ ետք տղոցմէ շատեր որոշեցին շարունակել իրենց կրթութիւնը եւ տեղափոխուեցան Թորոնթո ու այլ քաղաքներ:

1925-ին ազարակը գնեց եւ 1928 թուականէն սկսեալ տղոց խնամքը իր վրայ առաւ Գանատայի Միացեալ Եկեղեցին: 1929-ին ազարակը վերանուանուեցաւ Cedarvale դպրոց աղջիկներու համար: Ներկայիս այն նոյնանուն այգիին մաս կը կազմէ: 2010 Յունիս 26-ին այգիին մէջ տեղադրուեցաւ յուշատախտակ (Ontario Provincial Plaque)՝ ի յիշատակ այդտեղ ապրած Հայ տղոց: Գանատական Նպաստամատոյց Ընկերակցութիւնը Հայ որբերը Գանատա տեղափոխելու փորձեր կատարեց նաեւ յաջորդ տարիներուն: Մինչեւ 1927 թուական նպաստամատոյց Ընկերակցութեան ջանքերով Գանատա տեղափոխուեցան 40 կանայք ու աղջիկներ՝ որպէս տնայնագործ բանուորներ աշխատելու համար, եւ տղոց 14 հոգինոց մէկ այլ խումբ՝ ազարակներուն մէջ աշխատելու համար:

Այցելեցէք «Երկիր»ի Կայքէջը՝
www.yerkir.am

Հացին Խորհուրդը Հայերու Մէջ

Դարերէ ի վեր հայերու մէջ հացը նոյնացած է ճաշի, հիւրընկալութեան, խաղաղութեան, խնճոյքի եւ սօսի հետ:

Հայերս շատ հաց սպառող ժողովուրդ ենք: Հին Հայաստանի մէջ հացը եղած է առատութեան, հիւրասիրութեան եւ խաղաղութեան խորհրդանիշ: Եթէ հայը հիւրին առջեւ հաց դնէր, կը նշանակէր, որ իր տան դռներն ու սիրտը բաց են անոր համար: Հոնկէ ալ եկած է աղուհացով դիմաւորելու հայկական սովորութիւնը:

Հացին հետ կապուած հետաքրքրական գիտելիքներ

— Հայաստանի հեռաւոր գիւղերուն մէջ մինչեւ օրս ալ հացը դանակով չեն կտրեր, այլ կը բաժնեն ձեռքով, որպէսզի հացը ցաւ չզգայ դանակի սուր շեղքէն:

— Հայկական աւանդական հարսանեկան արարողութիւններուն մէջ հացը գլխաւոր դեր ունի. տան շեմին փեային հայրը մէկական լաւաչ կը փռէ նորապսակներու ուսերուն, որպէսզի հարսը «հացով մտնէ տուն»:

— Հայերը սուրբ համարած են թոնիրը, որուն մէջ հացը թխուած է: Բոլոր գիւղերուն մէջ թոնիր շինելու ատեն կանչած են քահանան, որպէսզի զայն օրհնէ: Թոնիրէն հանուած առաջին հացը կը զրկուէր այն տունը, ուր հիւանդ կար: Հացը տեսնելով՝ հիւանդը ապաքինելու հաւատքով կը լեցուէր:

— Դատարաններուն մէջ ժողովուրդը երդուած է հացով՝ զայն սուրբ համարելով:

— Հին Հայաստանի մէջ հացթուխը չէին դատարար ու չէին սպաններ. ան անձեռնմխելի էր:

— Հացերէն ամէնէն երկարակեացը լաւաչն է. անիկա իր թարմութիւնը կը պահէ շուրջ 6 ամիս: Լաւաչը կարելի է չորցնել, յետոյ վրան տեղ-տեղ ջուր ցանելով՝ ստանալ նախկին փափկութիւնը:

— Կը պատմուի, որ Գրիգոր Մագիստրոս Պահլավունի սովորութիւն ունէր մագաղաթի վրայ գրելու ժամանակ կտոր մը հաց դնելու իր առջեւ. ատիկա նշան էր, որ ինք ճշմարտութիւնը կը գրէր: «Հացին նայելով՝ մարդ եօթնապատիկ ճշմարտախօս կը դառնայ», կ'ըսէր ան:

— Հայկական սովորութիւն է Կաղանդի ծիսական տարեհացի պատրաստութիւնը, անիկա կ'ըլլայ կտոր կամ ձուածեւ, իսկ չափը՝ ըստ ընտանիքի անդամներու թիւին: Տարեհացին երեսը կը զարդարուի սերմերով, չոր ու մանր միրգերով: Հացին մէջ կը դնեն «միջինք». անիկա տան այդ տարուան բախտաբերութեան եւ հարստութեան խորհրդանիշն է, ուտելու ատեն, որու որ բաժին ինչայ, այդ անձը կը դառնայ տարուան բախտաւորը:

— 2014-ին լաւաչը ընդգրկուեցաւ ԵՈՒՆԵՍԿՕ-ի ոչ նիւթական մշակութային ժառանգութեան ցանկին մէջ՝ որպէս հայկական մշակոյթի արտայայտութիւն:

— Մատնաքաշը Հայաստանի մէջ շատ տարածուած հացի տեսակ է, որ կը թխուի ցորենի ալիւրով: Ան ընդհանրապէս ձուածեւ է, երբեմն ալ՝ կտոր: Մատնաքաշ անուանուածը յատկապէս է հացի երեսին մատներով աղօսագիծեր ձեւաւորելու պատճառով:



Մեր մեծերը՝ հացի մասին

«Ու երբ թխեն հարսերը հացը բարի՝ սիրերգութի՛նց թող ըլլայ»
Դանիէլ Վարուժան

«Մեր լեզուն մեր խիղճն է դա, սուրբ հացը մեր սեղանի»:
«Ես կ'ուզէի քեզ հետ կիսել վերջին պատառն իմ հացի»:
Համօ Սահեան

«Հաղորդուիլ անցեալին հաց ու գինուով կենսատող»:
Վահան Թէքեան

Միսաբ Մեծարեանց հացի հետ համեմատեց գրաբարի արժէքը.
«Օգտուիմք եւրոպական լեզուներու նորանոր եւ քարմ արտայայտութիւններէն, բայց չմոռնանք գրաբարին յուրի շտեմարաններէն օգտուիլ մանաւանդ: Ինչո՞ւ մեր Հացը գետին ցետեմ ու մուրացիկ, ուրիշի ետեւէն վազեմք»:

«Անահիտ» երաժշտանոցին ամալերջի համերգը

Ինչպէս ամէն տարի, այս տարի եւս, 1 Յունիս 2023-ին, տեղի ունեցաւ «Անահիտ» երաժշտանոցին տարեկան համերգը, Թորոնթօ, Գանատա:

Տիկին Անահիտ Կուստուզեանի աշակերտները 28 տարիներու ընթացքին ունեցած են զանազան համերգներ, օգնելու Հայաստանի մանկատուներու (orphanges) հոգալու երեխաներուն անմիջական անհրաժեշտ պարագաները, ինչպէս՝ Հայաստանի մէջ Նիկողայոս Տիգրանեանի անուան դպրոցի տեսողութեան զուրկ տաղանդաւոր աշակերտներուն բժշկական օգնութեամբ, Պրէիլ (Braille alphabet) յատուկ գիրքեր եւ այլ պարագաներ ապահովել:

Այս տարուան համերգը նոյնպէս նուիրուած էր Հայաստանի Նիկողայոս Տիգրանեանի անուան դպրոցի տեսողութեան զուրկ տաղանդաւոր աշակերտներուն, դրամահաւաքի միջոցով գնելու բժշկական պիտոյքներ եւ այլ անհրաժեշտ իրեր:

«Դրօշ Եռագոյն» տեսահոլովակը, կազմակերպուած տիկին Անահիտ Կուստուզեանի կողմէ եւ մասնակցութեամբ իր աշակերտներուն, Թորոնթօյի հայ երիտասարդ երգիչներու, հանրաճանաչ «Սասուն» պարաֆուլմի եւ հանրայայտ երաժիշտներու, իւրայայտուկ բարեգործական ծրագիր էր, նուիրուած 2020 թուականի պատերազմէն ծանրօրէն վիրաւորուած հայ հերոսներուն՝ ապահովելու բժշկական օգնութեամբ, որ դեռ ընթացքի մէջ է, կարեւոր նպատակ ունենալով անգամ մը եւս յիշեցնել մարդոց գնահատել կեանքի արժէքները:

Ներկաներուն ուրախ տրամադրութեամբ սկսաւ համերգը:
Շարունակաբար, երգով ու նուագներով բեմ բարձրացան հետեւեալ աշակերտները՝ Վիքթորիա Կոլենթցի, Ալիանա Աթթա, Անն Չերահեան, Քրիշա եւ Արջուն Զինտալ, Լիլիթ Աբրահամեան, Քաթրին Մատոյեան, Ռայհանա Թաֆատեր, Ամարա Զուքիւ, Լեքսի, Սազօ Քեսապեան եւ Դաւիթ Պոյաճեան:
Անահիտ Կուստուզեանի կատարմամբ հնչեցին «Anniversary song» եւ իր



ստեղծագործութիւններէն մէկը՝ Մշոյ բարբառով «Անտունի»ն, որ շատ համահունչ էր եւ յուզիչ մեր բոլորին համար՝ օտարութեան մէջ ապրողներու:
Բոլոր կատարումները հաճելի եւ սրտայոյզ էին: Համերգը աւարտեցաւ բուռն ծափահարութեամբ եւ ներկաներուն բարձր տրամադրութեամբ:

Խնդակցութիւն

Հորիզոնի խմբագրակազմը ջերմապէս կը շնորհակտնէ տէր եւ տիկին Մուրատ եւ Նորա Թէքը, անոնց աղջիկ զաւակով մը բախտաւորութիւն ուրախ առթիւ, եւ «Հորիզոն»ի երկարամեայ աջակից տիկին Շաքէ Կէօնճեանը՝ առաջին թոնուհիով բախտաւորութիւն առթիւ:

Տարածեցէք ձեր «հորիզոն»ը

<p>horizon</p> <p>HORIZON Hebdomadaire arménien Armenian Weekly Publié par / Published by Les Publications Arméniennes (1991) 3401, Olivar-Asselin Montréal, Québec Canada H4J 1L5</p> <p>Թորոնթօյի Ներկայացուցիչներ՝</p>	<p>Abonnement annuel / Yearly subscription Canada 2^e classe - 2nd class: \$80 plus applicable taxes 1^{re} classe - 1st class: \$95 États-Unis / USA 1^{re} classe - 1st class: \$95 US Ailleurs / Elsewhere 1^{re} classe - 1st class: \$125 US</p>	<p>Administration / Publicité Sylva Eshramdjian-Bachekjian (General Manager) Tél.: (514) 332-3757 E-Mail: sylvia@horizonweekly.ca</p> <p>Courrier de deuxième classe /No. 40065294 / Second class mail Dépôt légal: bibliothèques nationales du Québec et du Canada - ISSN 0708580X</p>	<p>Վարիչ Խմբագիր՝ Վահագն Գարագաշեան Վարչական պատասխանատու՝ Սիլվա Էհրամճեան Աւագ խմբագիր՝ Վրէժ-Արմէն Արթիմեան Անգլերէն/Ֆրանսերէն՝ Վիզէն Արրա- համեան, Թիմա Սիլվաշեան Սրբագրիչ՝ Սոնա Թիթիզեան Ծանուցումներու Չեւարում Լորի Խաչերեան</p>	<p>Financé par le gouvernement du Canada</p> <p>Funded by the Government of Canada</p> <p>Canada</p>
--	---	---	---	---

CAMAM



CENTRE
D'ASSISTANCE
MONDIALE
ARMÉNIEN DE
MONTREAL

Current Fundraising Campaigns

Our goal is to assist and provide financial aid to at-risk communities around the world and help them to overcome the many hardships that they face in their native countries.

To donate online visit www.camam.org

General Donations



Aid to Artsakh



Campagnes de financement en cours

Notre objectif est d'aider et de fournir une aide financière aux communautés à risque du monde entier et de les aider à surmonter les nombreuses difficultés auxquelles elles sont confrontées dans leur pays d'origine.

Pour faire un don en ligne visiter www.camam.org

3401 Rue Olivar-Asselin
Montréal, Quebec
H4J 1L5
Canada

397 boul. des Prairies
Laval, Quebec
H7N 2W6
Canada

45 Hallcrown Place
Willowdale, Ontario
M2J 4Y4
Canada

ARMENIAN HERITAGE CRUISE®

www.armenianheritagecruise.com



ARMENIAN HERITAGE CRUISE
25th
ANNIVERSARY



All Inclusive Cruise
January 14-20, 2024

Cozumel • Bimini *Grand Cayman*

Join us on the **CELEBRITY REFLECTION** for live Armenian music, Armenian dance, Armenian cultural programs, Tavlou and Belote tournaments, Armenian festival day and more!



Celebrity **X** Cruises®



Prices starting at:

INSIDE CABIN	\$1229
OCEAN VIEW	\$1599
BALCONY	\$1949
SKY SUITE	\$3424
CELEBRITY SUITE with Veranda	\$6124
For pricing on triple or quad occupancy cabin, please contact TravelGroup	\$824
ALL SUITES	\$1624

14 2021 BEST PREMIUM CRUISE LINE
TRAVEL GROUP'S 15th Annual World Cruise Awards

All Rates are Per Person Double Occupancy. Government Tax is additional at \$165.61.



You must book with TravelGroup in order to attend all private Armenian Events.



Contact Information:

99 SE Mizner Blvd, SUITE 911, Boca Raton, FL 33432
 Local 561-447-0750, Toll Free 866-447-0750 Ext 102
 AHC@travelgroupint.com



CASSANDRA I.D.A. PHARMACY

ARMENIAN MEDICAL CENTRE & PHARMACY

PHARMACISTS
SARKIS BALIAN, BScPhm, RPh
MARAL BALIAN, PharmD, RPh
VARTAN BALIAN, PharmD, RPh

ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ՝
 ՊԱԼԵԱՆ ԸՆՏԱՆԻՔ

ԴԵՂԱԳՈՐԾՆԵՐ՝
 ՄԱՐԱԼ ՊԱԼԵԱՆ
 ՎԱՐԴԱՆ ՊԱԼԵԱՆ

- Դեղագիրներու պատրաստութիւն՝ շաբաթական յատուկ տուփերու մէջ:
- Արեան ճնշման քննութիւն եւ հետեւողականութիւն՝ անվճար
- Շաքարախտի քննութիւն
- Դեղերը իրենց հասցէներուն առաքելու անվճար սպասարկութիւն
- Տարեցներու 10% զեղչ
- Կը յարգենք եւ սիրով կը կատարենք բոլոր ապահովագրական ընկերութիւններու պայմանները
- Walk-In Clinic բաց է շաբաթը 6 օր: Կրնաք բժիշկները տեսնել առանց ժամադրութեան:

Դիմեցէք մեզի եւ պիտի դառնաք մեր մնայուն յաճախորդը:

Walk-in Clinic onsite: (416) 331-9111

հասցէ՝ 2040 Victoria Park Ave. (Victoria Park & Cassandra)
 Toronto, Ontario M1R 1V2 Tel : (416) 449-2040 Fax: (416) 449-2048





Grocery Store | Bakery | Butchery | Café | Catering



NOW OPEN

Mississauga
720 Bristol Road West,
ON, L5R 4A5
(905) 502 9292

Scarborough
1909 Lawrence Ave East
ON, M1R 2Y6
(416) 755-5084



← Scan Here To Check Out Our Weekly Flyer At www.arzfinefoods.com



← Scan Here for Our Catering Book At www.arzfinefoods.com

For The Latest News And Deals Follow Us At:

www.arzfinefoods.com @arzfinefoods



BARRY

KAREN

ALEX

GARO

KAZANDJIAN

BUY | SELL | FINANCE

RE/MAX



IMMOBILIER

+

HYPOTHÈQUE

514 333 3000

CLASSÉS PARMIS LES MEILLEURS COURTIERIS RE/MAX AU NIVEAU MONDIAL

RANKED AMONGST THE HIGHEST PERFORMING RE/MAX BROKERS WORLDWIDE



RE/MAX 3000

SIÈGE SOCIAL: 9280 BOUL. DE L'ACADIE, MONTREAL QC H4N 3C5
PAVILLON: 2500 RUE DES NATIONS #102, SAINT-LAURENT, QC H4R 3J9